

նոնք 'ի փառս Օգոստոսի. յորս մերթ այնքան վեր կը բարձրանայ, որ թուի անհետ ըլլալ երկնից բարձրութեանց մէջ. Ոչ նիւթոյն և ոչ քերթողին կը յարմարէին այս վսեմ բարձրութիւնքս:

Սակայն շատ ախորժով կը կարգացուին անոր անակրէոնեան երգերն, յորս կը փայլին հաւասարապէս փափկութիւն իմաստից, պարզութիւն և ներգաշնակութիւն բացատրութեանց. Զոր օրինակ, դարնան վերստին դարձն, տարիներուն երազ փախուստն, սէրն՝ իւր վայելիւք և ցաւերով հանգերձ, բարեկամին յանկարծական մահն. ահա այս նիւթերուս մէջ շատ ճարտար է Որատիոսի գրիչն:

Շարունակելի

ԼԱՆԿԻՆԻ ՄԷՋ ԵՂԱՄ ԳԻԻՏԵՐՆ

Պ. Նատէյլաք ինչ ինչ տեղեկութիւններ կու տայ մեզ իր ըրած վերջին գիւտոց վրայ՝ որ 'ի Լանկինէ, Հունգարիոյ մէջ, Դանուբի աջակողմեան եզերաց վրայ:

Հորին տակ գտնուեցան շատ բնակութիւնք փեթակաձև և երկու գլերովանոց. այն աւերակաց միջէն գրեթէ 12,036 այլ և այլ առարկաներ ժողովեց, որոնց մէջ կը գտնուին. դանակք, քերիչք, և խոհանոցի զանազան գործիներ, ընդ ամէնն 4,680 ի չափ. ողորկ կացինք 812 հատ. ոսկրէ և եղջերեոյ գործիներ՝ 833 հատ. 3933 հողէ անօթներ. 956 հատ խեցեղէն վարդեր. պղնձէ առարկաներ և բժժանք 241 հատ. Դժուարին է ճշդութեամբ հաստատել թէ որ թուականին կը վերաբերի այս ամէն գտնուած առարկաներս: Բայց հողէ անօթներուն գոյնը և զարդերը շատ կը նմանին յունական անօթոց գուներուն և զարդերուն. Սակայն անոնց արտաքին կերպարանքն աւելի տձև են, և կազմութիւնն ոչ այնչափ նուրբ և ազնիւ, իսկ եփուածքն՝ միշակ. Բուզարկաւորութեան անօթներն շատ կը նմանին անոնց՝ որոնք գտնուեցան 'ի Հիսարլըք, 'ի Կովկաս, և նոյն իսկ Եգիպտականերուն. Կրնանք ուստի ենթադրել թէ Լանկինի մէջ գտնուած հողէ անօթները թերևս Բունաց գաղթականներն բերեր են, կամ գոնեայ ուրիշ ասիական գաղթականներ, որք մօծ յարաբերութիւն ունէին ընդ Յոյնս: Իսկ թուականին գալով թէ արդեօք որ ժամանակի գործեր են, Պ. Նատէյլաք կը համարի թէ քարի դարուն վերջին շրջանին կը վերաբերին: